

11555

338.14
9-68

1931

Սօցիալական գիտությունների կոլեկցիաների միություն
«ԱԶՆՈՒՆՈՒՄՆԵՐ»

34.0

Վ-

132

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՈՐԻՆԱԿԵԼԻ
ՆՈՐՄԱՆԵՐՆ,
ԱԾԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՅԵՎ
ՀԱԾՎԵԱՌՈՒՄԸ ԱԾԽԱՏՈՐԵՐՈՎ

(2-րդ վերամշակած ու լրացրած հրատարակություն)

Իրեն Կ 10 կոպ.

338.14

Գ-68



Բազու — 1931

2001

ОТПЕЧАТАНО
в типографии
„АЗЕРНЕПР“.
Баку, Б.-Морск., № 16

23479-60

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Կոլխոզնիկների աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, վորակյալ ույժերը, բարդ գյուղատնտեսական մեքենաները, տրակտորները ինտենսիվ ոգտագործելու և սահմանափակ կարճ ժամկետ պահանջող գյուղատնտեսական աշխատանքները շտապ կերպով կատարելու համար անհրաժեշտ է, վոր Կոլխոզներն իրենց մոտ աշխատանքների այնպիսի սիստեմ կարգեն, վոր լիովին համապատասխանի, Կոլխոզի և նրա առանձին անդամների շահերին:

Աշխատանքների այդպիսի սիստեմ է հանդիսանում աշխատանքի վարձատրումն ըստ կատարած գործի, վորը վորպես կանոն, գործադրվում է այն բոլոր գյուղատնտեսական աշխատանքների վերաբերմամբ, վորոնց կատարման համար կարելի է նորմաներ մշակել: Աշխատանքն ըստ ժամանակի վարձատրելու սիստեմը պահպանվում է միայն այն դեպքերում, յերբ աշխատանքի քանակն իր բնույթով հաշվեառման չի յենթարկնում (որինակ՝ հոտերի արածացնելը, գյուղատնտեսական ֆլասատուների դեմ կռվելը, այգու և բանջարանոցի պահպանությունը և այլն): Աշխատանքներն ըստ գործի վարձատրելու դեպքում անհրաժեշտ է աշխատանքի լավ հատկության համար պրեմիաներ տալ և վատ կատարած գործի համար տուգանքի յենթարկել, վորպեսզի

աշխատանքի քանակի հետեից չընկնեն՝ վնասելով նրա վորակը:

Աշխատանքներն ըստ կատարած գործի վարձատրելու սխտեմ մտցնելու համար անհրաժեշտ է, վոր կոլխոզները նախ և առաջ գործի կատարման նորմաներ կարգեն գյուղատնտեսական աշխատանքների տարբեր տեսակների համար, ապա առանձին աշխատանքների գնահատում կատարեն ըստ գործի այնպես, վոր աշխատանքները դասավորեն համաձայն նրանց ընդլայնի և բարդության (հեշտ, ծանր, պատասխանատու, հասարակ աշխատանք և այնպիսի աշխատանք, վորը պահանջում է հատուկ ընտելություն, նախապատրաստություն, վորակում) և մտցնեն աշխատանքի ճիշտ հաշվետառում: Հաշվի առնելով, վոր կոլխոզներում աշխատանքի կազմակերպման հիմքում պետք է դրվի աշխատանքն ըստ կատարած գործի վարձատրման սխտեմը, ԱՍՍՀ-ն կոլխոզցենտրը ներկա բրոշյուրում որիննտացիայի նյութեր է տալիս այդ սխտեմը մտցնելու համար: Սա տալիս է աշխատանքների որինակելի նորմաներ գյուղատնտեսական աշխատանքների գլխավոր տեսակների համար, տալով աշխատանքների գնահատում ըստ որավարձի և ըստ գործի, հաշված աշխատանքային օրերով: Բացի դրանից, բրոշյուրում բացատրություն է տված աշխատանքի գնահատության կարգի և նրա հաշվետառման մասին աշխատանքային օրերով:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԻՆԱ- ԿՆԼԻ ԲԱԺԱՆՈՒՄ ԸՍՏ ԴԺՎԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՎՈՐԱԿԻ

Հեռ աշխատանքներ

1. Ձի, յեղ և գոմեշ քշելը.
2. Անասունների աղբը աղոսներում դարսելը.
3. Ցաքանելը.
4. Կարտոֆել տնկելը.
5. Խոտ չորացնելն ու հավաքելը.
6. Խուրձեր կապելը.
7. Կալը մաքրելը (դարմանն ու հատիկները հավաքելը).
8. Տավարածի ոգնական.
9. Պահապան և սուրհանգակ.
10. Բակի և շենքերի մաքրելը:

Միջակ աշխատանքներ յեվ վորո՞ւ ընտելություն պահանջվող աշխատանքներ

1. Կուլտիվատորներով աշխատելը.
2. Ձեռքով ու մեքենայով ցանելը.
3. Քաղհան անելը, նոսրացնելը և բրիչով աշխատելը.
4. Հատիկների ախտահանելը.
5. Ծխախոտաբուծական աշխատանքները.
6. Պտուղների և խաղողի այգիներում աշխատելը.
7. Բամբակ հավաքելը.

8. Կով կթելը.

9. Սնասուններին խնամելը.

Ծանր աշխատանքներ յեկ հասուկ հստությամբ
պահանջող աշխատանքներ.

1. Զիւնների, յեզների և գոմեշների ոգնու-
թյամբ հերկելը.

2. Զրելու աշխատանքը.

3. Հարող, հնձող և խուրձ կապող մեքենանե-
րի վրա աշխատելը.

4. Հացահատիկների և խոտի ձեռքով հնձելն
ու հարելը.

5. Կալսելու մեքենայի թմբուկի (բարաբանի)
մեջը լցնելու աշխատանքը.

6. Քաղաքամերձ տնտեսություններում կովե-
րին խնամելը (կերի ուցիոն).

7. Խոշոր յեղջուրավոր անասուններին արա-
ծացնելը.

8. Սվազ բրիգադիւններ.

9. Պահեստում աշխատելը.

10. Մի տարուց պակաս ստաժ ունեցող տրակ-
տորիստ:

Վորակում պահանջող աշխատանքներ

1. Սյգեգործ և բանջարաբույծ.

2. Մեղվաբույծ, շերամաբույծ, թռչնաբույծ.

3. Մի տարուց ավելի ստաժ ունեցող տրակ-
տորիստ.

4. Փականագործ, դարբին.

5. Հյուան, քարտաշ, տակառագործ, ջրաղացալ.

6. Տնտեսութեան կամ տնտեսութեան վորոշ
ճյուղի վարիչ.

7. Վարչութեան նախագահ.

8. Հաշվապահ, քարտուղար:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿՈՒՈՐՁՆԵՐՈՒՄ
ՀԱՇՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՐԵՐՈՎ

Մի շարք կոլխոզների փորձը ցույց է տալիս
վոր նրանց գործադրած աշխատանքի գնահատու-
մը պայմանական-դրամական միավորներով հա-
ճախ բացասական հետևանքներ է ունենում, շը-
նորհիվ նրան, վոր այդ գնահատումը վորոշ չա-
փով բարդ և դժվար է յուրացվում կոլխոզային
մասսայի կողմից: Աշխատանքի, դրամական միա-
վորներով գնահատելը կոլխոզիկներն ամուր աշ-
խատավարձի տեղ են ընդունում և նրանք կոլ-
խոզի վարչութեանից պահանջում են իրենց աշ-
խատանքը լիովին վարձատրել և կատարած գոր-
ծի համար անմիջապես վճարել, մինչդեռ կոլխո-
զում միջոցներ չեն լինում կոլխոզիկներին նույն
խիսկ մասնակի ավանս տալու դրամով կամ մի եր-
ջով: Հաճախ պատահում է, վոր կոլխոզները
նույն խիսկ տնտեսական տարվա վերջում հնարա-
վորութեան չունին իրենց յեկամուտով ծածկե-
լու կոլխոզիկների աշխատանքի վարձատրումը:
Այս ամենն առաջ է բերում մեծ թյուրիմացու-
թյուններ, աշխատանքի կազմալուծում, աշխա-
տանքային ղիսցիպլինայի անկում, իսկ յերբեմն
եւ կոլխոզների քայքայում:

Այսպիսի վնասակար հետևանքներից խույս
տալու համար անհրաժեշտ է կոլխոզներում աշ-
խատանքի գնահատում կատարել վոշ թե դրա-
մական, այլ աշխատանքային միավորներով (աշ-
խատանքային որերով): Աշխատանքի այսպիսի
գնահատումն ավելի մատչելի է կոլխոզիկներին.

նա կոլխոզնիկի մեջ ամբաստանում է այն գիտակցությունը, վոր նրա յեկամուտը վորոշվում է կոլխոզի ընդհանուր յեկամուտով և աշխատանք-ները մեջ իր ունեցած մասնակցությամբ, վոր նա, նպաստելով իր աշխատանքով ամբողջ կոլ-խոզի բարեկեցությանը, դրանով բարելավում է իր նյութական դրությունը:

Աշխատանքային որերով գնահատումներ մտց-նելու համար անհրաժեշտ է նախ և առաջ բոլոր աշխատանքները բաժանել մի քանի գրուպպա-ների և աշխատանքային որերով գնահատել աշ-խատանքների ամեն մի գրուպպան համաձայն այն հանգամանքի, թե վորքան դժվար կամ հեշտ են այդ աշխատանքները կամ ինչ վորակում է պահանջվում այդ աշխատանքները կատարելու համար:

ԱռՍՀ կոլխոզցիները Ադրբեջանի կոլխոզնե-րի համար հանձնարարում է աշխատանքները բաժանել, համաձայն նրանց բնույթի, հեշտ, մի-ջակ, ծանր և վորակյալ աշխատանքների: Միա-ժամանակ մի որվա կատարած աշխատանքի նոր-մայի հետևյալ գնահատությունն է վորոշվում, արտահայտած աշխատանքային որերով.

Հեշտ աշխատանքները գնահատվում են — 0,75 ($\frac{3}{4}$) աշխատոր.

Միջակ աշխատանքները — 1 աշխատոր.

Ծանր աշխատանքները — 1,25 ($1\frac{1}{4}$) աշ-

խատոր.

Վորակյալ աշխատանքները — 1,5 ($1\frac{1}{2}$) աշ-խատոր.

Այստեղ ամենահեշտ, վոչ բարդ աշխատանք-ները գնահատվում են վորպես 0,75 աշխատան-

քային որ, ծանր աշխատանքները, վորոնք վորոշ-ունակություն են պահանջում, $1\frac{1}{2}$ աշխատանքա-յին որով ավելի են գնահատվում, քան հեշտ աշ-խատանքները, իսկ վորակյալ աշխատանքները հեշտ աշխատանքներից յերկու անգամ ավելի են գնահատվում, քան հեշտ աշխատանքները:

Այսպիսի գնահատումից հետևում է, վոր յե-թե կոլխոզնիկը, յենթադրենք, թեթև աշխատանք է կատարել (անասունների աղբը դարսել և ակոս-ներում) բանվորական որի վորոշված 10 ժամի ընթացքում, նրա աշխատանքը գնահատվում է վորպես $\frac{3}{4}$ բանվորական որ, իսկ մյուս դեպ-քում, որինակ, վորակյալ կոլխոզնիկի (տրակտո-րիստի) աշխատանքը նույն բանվորական որվա համար գնահատվում է վորպես $1\frac{1}{2}$ բանվորա-կան որ:

Ոգտվելով կոլխոզցիների մշակած (տեղերում նախապես ստուգված) աշխատանքի որինակելի նորմաներով, մենք կարող ենք վորոշել գործար-քային գնահատումներն աշխատորերով, այսինքն 1 հեկտար տարածության վրա կատարվող այս կամ այն աշխատանքի գնահատումը դաշտաբու-ծության, այգեգործության և բանջարաբուծու-թյան մեջ կամ կենդանաբուծության վորոշ աշ-խատանքների համար՝ վորոշ քանակությամբ անասունների համար գործադրած աշխատանքի գնահատումները: Դրա համար հարկավոր է աշ-խատանքների կատարման նորմաների որական գնահատումն աշխատանքային որերով բաժանել այդ աշխատանքների համար վորոշված կատար-ման նորմային: Որինակ.

10 Ժամյա բանվորական որի աշխատանքի նորման	Աշխատանքի բաժանումն լրաց գծվորության և վորակի	Աշխատանքի նորմայի որական գնա- հատումը աշ- խատանքային որերով		1 հեկտարի գործարքային գնահատումն աշխատան- քային որերով	
		Աշխատանքա- յին որեր	Աշխատանքի նորմայի հաշվարկով մասեր	Աշխատանքա- յին որեր	Աշխատանքի նորմայի հաշվարկով մասեր
Հողի հերկումը մի խո- փանի գութանով 1 գույք ձիով փափուկ հողերի համար . . .	0,5 հեկ	ծանր	1,	25	2 50
Յանելը ձեռքով . . .	2 "	միջակ	1	—	50
Յաքանելը ձիով . . .	2 "	հեշտ		75	40
Ձեռքով կախելը և քա- մելը	1/4 "	միջակ	1	—	4 —

Գործարքային գնահատումով յեթե յենթա-
դրենք կոլխոզնիկ հերկողը (1-ին որինակ), վորի
աշխատանքը ծանր է համարվում, որվա ընթաց-
քում հերկի 0,5 հեկտար, նրա աշխատանքը կը-
գնահատվի վորպես 1,25 աշխատանքային որ,
այսինքն 1 հեկտարի գործարքային գնահատու-
մը—2,50 աշխատանքային որը—բազմապատկ-
վում է մշակած հեկտարների թվին (2,50 անգամ
0,5=1,25): Յեթե տվյալ կոլխոզնիկը վորոշ Ժա-
մանակ աշխատելով հերկի 0,5 հեկտար հող, նրա
այդ աշխատանքը կգնահատվի վորպես 3,75 աշ-
խատանքային որ (2,5 × 1,5 = 3,75): Վորքան
շատ գործ կատարի կոլխոզնիկը, այնքան ավելի
կգնահատվի նրա աշխատանքը աշխատանքային
որերով:

Ճիշտ նույն յեղանակով գնահատվում է նաև
աշխատանքի վորակը: Այսպես, որինակ, յեթե
կոլխոզնիկը հերկել է գութանով և նրա այդ աշ-
խատանքը լավ վորակի է (միջից բարձր) և պետք
է խրախուսման յենթարկվի, աշխատանքի հատ-
կության համար նրա աշխատանքային որերին
լրացուցիչ հավելում են կատարում: Յենթա-
դրենք տվյալ կոլխոզնիկը 4 որվա ընթացքում
հերկել է 3 հեկտար հող և այդ աշխատանքի հա-
մար նրան հաշվել են գործարքային գնահատու-
մով 7,5 աշխատանքային որ: Յենթադրենք վո-
րոշված է, վոր լրացուցիչ խրախուսող հավելու-
մը հավասար է հաշված աշխատանքային որերի
ընդհանուր քանակի 10 տոկոսին: Այն Ժամանակ
պարզ է, վոր վորակի համար լրացուցիչ հավե-
լումը հավասար կլինի 0,80 աշխատանքային որի
և ընդամենը կստացվի 7,50 + 0,90 = 8,30 աշ-
խատանքային որ:

Այսպես են վորոշվում որական ու գործար-
քային գնահատումները աշխատանքային որերով:
Յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած աշխա-
տանքային որերը գրվում են հատուկ ցուցակում
և տնտեսական տարվա վերջում հաշվում են, թե
ինչքան է ստացվում: Յերբ կոլխոզի ընդհանուր
յեկամուտը ընթացիկ տնտեսական տարվա հա-
մար պարզվում է, բոլոր կոլխոզնիկների այդ
տարվա ընթացքում ունեցած աշխատանքային
որերի քանակի հիման վրա, վորոշվում է, թե վոր-
քան պետք է վճարել մի աշխատանքային որվա
համար, այստեղից էլ վորոշվում է, թե վորքան
պետք է իր աշխատանքի համար ստանա ամեն
մի կոլխոզնիկ: Յենթադրենք կոլխոզնիկների մեջ
բաժանելիք կոլխոզի յեկամուտների գումարը

հավասար է 45,000 ռուբլու, իսկ բոլոր կոլխոզ-
նիկներն աշխատել են 30.000 աշխատանքային
որ: Այն ժամանակ ամեն մի աշխատանքային որ
կարժենա — 45.000 ռուբ. բաժանած 30.000-ի =
1 ռ. 50 կ: Յեթե յենթադրենք կոլխոզնիկ Պետ-
րոսն աշխատել է 200 աշխատանքային որ, նա
կստանա 1 ռ. 50 կ. $\times$ 200 որ = 300 ռուբլի:
Նույնպես վորոշվում է նաև կոլխոզի մնացած
անդամների մասնակցության չափը յեկամուտին:

ԱՂՅՈՒՍԱԿԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ձանազան տեսակի գյուղատնտեսական աշխատանքներ կատա-
րելու նորմաները և աշխատանքների բաժանումն ըստ իրենց բը-
նույթի՝ որական և գործարքային զնահատումներով՝ հաշված աշ-
խատանքային որերով»:

Բոլոր գլխավոր գյուղատնտեսական աշխա-
տանքներն աղյուսակում դասավորված են ըստ
գյուղական տնտեսության առանձին ճյուղերի:
Դաշտաբուծության բաժնում թված են աշխա-
տանքները հետևյալ մշակութիւնների նկատմամբ.
բամբակի, աշնանացան ցորենի, գարու, գարնա-
նացան կանեֆի, յեգիպտացորենի, ծխախոտի,
քունջութի, արևածաղիկի, սոյայի, կարտոֆելի
և թիթեռածաղիկի (լյուցերնի):

Խաղողաբուծության նկատմամբ թված են
պտղատու խաղողի այգիների խնամելու աշխա-
տանքները: Այգեգործության նկատմամբ մատ-
նանշված են թե այն աշխատանքները, վորոնք
վերաբերում են նոր այգի տնկելուն և թե այն
աշխատանքները, վորոնք վերաբերում են պրա-
դատու այգիների խնամելուն: Կենդանաբուծու-
թյուն բաժնում թված են լծկան ու մթերատու
անասունների և թռչունների խնամելու աշխա-
տանքները:

Աշխատանքները թվելուց հետո առաջին սյու-
նյակում (ընդհանուր համարակազման յերրորդ
սյունյակում) բերված են այս կամ այն աշխա-
տանքները կատարելու նորմաները, հաշված մի
մարդու 10-ժամյա բանվորական որի նկատմամբ,
այսինքն թե այն դաշտում, վորտեղ վորոշ աշ-
խատանք է կատարվում, քանի հեկտար կամ հեկ-

ստարի վոր մասը կարող ե մշակել նորմալ պայմաններում 1 աշխատողը 10-ժամյա բանվորական որում, յեթե նա վորոշ չափով ապահովված ե մեքենաներով, գործիքներով և քաշող ուլժով: Դաշտաբուծության բաժնում մի քանի աշխատանքների համար—բամբակ հավաքելու, ցորենն ու գարին տեսակների բաժանելու, սերմերը ֆորմալինով ախտահանելու, հացահատիկների բերքը տեղափոխելու համար—աշխատանքի կատարման նորմաները բերված են քաշի միավորներով (փթերով, ցենտներներով և տոններով): Կենդանաբուծության բաժնում մատնանշված ե թե նորմալ պայմաններում 1 մարդը 10-ժամյա բանվորական որում քանի գլուխ անասունի պետք ե խնամի, առանձին հաշված նստակյաց և քոշվորական անասնապահությունը:

Աղյուսակի հետևյալ—չորրորդ սյունյակում թվերով արտահայտված ե, թե վորքան բանվորական ուլժ ե պահանջվում (հաշված աշխատանքային որերով) 1 հեկտարի վրա աշխատանքը կատարելու համար: Դա վորոշվում ե այսպես. միավորը բաժանվում ե այն թվին, վորը արտահայտում ե աշխատանքի կատարման նորման 10-ժամյա բանվորական որում: Այն աշխատանքների համար, վորոնք տարբեր կատեգորիաների մի քանի աշխատողներ են պահանջում, յուրաքանչյուր կատեգորիայի համար առանձին առանձին նշանակված ե բանվորական ուլժի քանակը: Որինակ. 1) յեթե մի խոփանի գութանով—2 գույգ յեզով կամ գոմեշով նախկին Գանձակի շրջանում միջակ հողերի հերկելու համար 10-ժամյա բանվորական որի աշխատանքի նորման հավասար ե $\frac{1}{3}$ հեկտարի, մի հեկտար հեր-

կելու համար կպահանջվի 3 հոգի գոմեշ քշողներ և 3 հոգի գութանով հերկողներ: 2) հացահատիկների (ցորենի, գարու) բերքի կալսելը տրակտորին կախով մեքենայով նորմալ պայմաններում պետք ե կատարվի տարբեր կատեգորիայի աշխատողների հետևյալ քանակի մասնակցությամբ. կախող մեքենայի մոտ հավաքող բանվորներ—14 հոգի, բարաբանը լցնողներ—2 հոգի, 1 տրակտորիստ և 2 բանվոր—դարմանն ավելու համար:

Այնուհետև 5-րդ սյունյակում աշխատանքները բաժանված են ըստ իրենց բնույթի, 6-րդ սյունյակում հաշված ե աշխատանքի որական նորմայի գնահատումն աշխատանքային որերով, իսկ 7-րդ սյունյակում—աշխատանքի գործարքային գնահատումը աշխատանքային որերով 1 հեկտարի նկատմամբ:

Աշխատանքի կատարման նորմաները տված են վորպես որինակելի նորմաներ: Այդ նորմաների մշակման ժամանակ, իհարկե, չեր կարելի նախատեսել այն բոլոր պայմանները, վորոնք կարող են փոխել նրանց չափը այս կամ այն կողմ՝ բարձրացման կամ իջեցման կողմը: Այստեղ յուրաքանչյուր առանձին դեպքում նշանակութուն ունի մեքենաների ու գործիքների դրությունը, լծկան անասունների հատկությունը, հողի պայմանները, տեղի թեքությունը և այլն: Անհրաժեշտ ե, վոր կոլխոզները տեղերում այնքա փորձեն այդ նորմաները լավ աշխատողների միջոցով: Յեթե տեղական փորձը հաստատի, վոր աշխատանքի կատարման նորմաները ցածր կամ բարձր են, այն ժամանակ նրանց համապատասխան կերպով պետք ե ճշտել:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐՄԱՆՐԸ

գյուղատնտեսական աշխատանքների զանազան տեսակների համար և աշխատանքների բաժանումն ըստ իրենց բնույթի, աշխատանքային ուղիով հաշված գործադրային դնահատումներով

Աշխատանքների տեսակները	2	3	4	5	Մշակման ընդհանուր				10
					Մի մասը 10 մասով	Բանաձևային ուժի հաշվարկը (մաս-նական) 1 հիմք	Զանգվածային ուժի հաշվարկը (մաս-նական)	Զանգվածային ուժի հաշվարկը (մաս-նական)	
1	2	3	4	5	6	7	8	9	10
Ա. ԳԱՇՏԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ									
1. Բամբակ									
1. Ցորձան - Պատկերով									
2. Գործարարական աշխատանքներ									
3. Գործարարական աշխատանքներ									
4. Գործարարական աշխատանքներ									
5. Գործարարական աշխատանքներ									

1000

1	2	3	4	5	6	7	8	9	10
6. Գործարարական աշխատանքներ									
7. Գործարարական աշխատանքներ									
8. Գործարարական աշխատանքներ									
9. Գործարարական աշխատանքներ									
10. Գործարարական աշխատանքներ									
11. Գործարարական աշխատանքներ									
12. Գործարարական աշխատանքներ									
13. Գործարարական աշխատանքներ									
14. Գործարարական աշխատանքներ									
15. Գործարարական աշխատանքներ									
16. Գործարարական աշխատանքներ									
17. Գործարարական աշխատանքներ									
18. Գործարարական աշխատանքներ									

23449-60

1	2	3	4	5	6	7	8	9	10
19	Բամբակի միջալար սեր- մանիչով ցանքս (մի ձեռով)	1	1 ղեկավար	միջակ	1	—	1	—	
20	Բամբակի յեղկալար սեր- մանիչով ցանքս յեղկու- ձեռով	3	1/3	միջակ	1	—	—	30	
21	Սերմ տալը	3	1/3	թեթև	—	75	—	30	
22	1-ին բաղձան և հոս- րացնելը	1/20	20	միջակ	1	—	20	—	
23	Զեռքի «Պլանետով» հո- ղը փափկացնելը	1/8	8	միջակ	1	—	8	—	
24	Զրու «Պլանետով» հո- ղը փափկացնելը մի ձեռով	1	1 բշոյ 1 ղեկավար	թեթև միջակ	—	75	—	80	
25	2 և 3-րդ բաղձան	1/15	15	միջակ	1	—	15	—	
26	Գարձանը բամբակի շարքում «կեռ»-ով	1/8	8	միջակ	1	—	8	—	
27	Գամբակի աման մա- մանակ չրելը	1/2	2	ծանր	1	25	2	50	
28	1 անգամ բամբակ հավաք.	1 փ. 20 փ.	—	միջակ	1	—	—	70	
29	2 " " "	1 փ.	—	միջակ	1	—	1	—	
30	3 " " "	30 փ.	—	միջակ	1	—	1	30	
31	Գործարան տանելը՝ 18 վերստ հեռու	1/2 հեկտ.	2	միջակ	1	—	2	—	
32	Բամբակի ցողուններ հավաքելը	1/4	4	թեթև	—	75	—	30	

Զգեցնել գնահա-
տում 1 փթեխ

Բեղքն, սրկնակ,
հեկտարին 7,2
ցինտ. վնեկելու

1	2	3	4	5	6	7	8	9	10
33	II ԱՇՆԱՆԱՅԱՆ ցորեն, գարնանայան ցորեն, գարբ								
34	Միախորի գութանով հերկը լուծալին շրջանում 4 գույզ յեղնեղով	1/4	4 բշոյ 4 հերկող	թեթև ծանր	—	75 25	3 5	—	
35	Նույնը 3 գույզ ձեռքով ծանր հողերում (նախկին Լուրբախի զրջան, նախկին Անթրոպոսի շրջանի մա- սեր և Շիրվանի մասեր)	1/4	4 բշոյ 4 հերկող	թեթև ծանր	—	75 25	3 5	—	
36	8 գութանի ցորենով 3—4 ձեռով հողը փրկելը մի անգամ	1/3	3 հերկող	ծանր	1	25	1	80	
37	Նույնը 2 անգամով	1/5	0,7 1,1/3	միջակ միջակ	1 1	—	—	70 30	
38	Ցաքանելը	3/4							
39	2 գույզ յեղնեղով կամ գութանեղով գութանով 2-րդ հերկը ծանր հողե- րում (նախկին Լուրբախի շր- ջան, նախկին Շիրվանի մաս)	1/3		թեթև	—	75	2	20	
40	Նույնը 2 գույզ ձեռքով	0,5	3 հերկող	ծանր	1	25	3	80	
41	Սերմացուն առավարներ բամբակը	1/5 տան (սրբե- ղով)	2	ծանր	1	25	2	50	
			—	թեթև	—	75	—	50	

Միջակ և թեթև
հողերի մշակման
նորմաները և գնա-
հատումները, ցույց
են տրված բամ-
բակաբուծության
բամբակում.

Գնահատումը
1 տոննին.

1	2	3	4	5	6	7	8	9	10
42	Ծղկոտ հարելը (2 զույգ խզներով)	1/2	2	միջակ	1	—	2	—	Գնահատումը 1 ցենտներին
43	Ճորձակներով ախտահա- նանելը	16 ցենտն. 3,0	— 1/3	միջակ միջակ	1 1	— —	— —	10 30	
44	Ձեռքով ցանքս			բեթև միջակ	—	75	—	40	
45	8 շաբաթի դիակավոր շաբաթանով ցանքս մի զույգ ձիով	2	բշող 1/2 դեկ. 1	բեթև միջակ	1	—	—	—	
46	10 շաբաթի դիակավոր շաբաթանով ցանքս 3 ձիով	2,5	բշող 0,4 դեկ. 0,8 (2 մարդ)	բեթև միջակ	—	75	—	30 80	
47	12 շաբաթի դիակ. շաբ- աթան. ցանքս 4 ձիով	3,0	բշող 0,13 դեկ. 0,6 2	բեթև միջակ ծանր	— 1 1	75 — 25	— — 2	30 60 50	
48	Վրոնգում. (տափար. տեղ.)	1/2							
49	Մանդարով հավաքելը և խուրձ կապելը	1/10 1/3	10 3	ծանր ծանր	1 1	25 25	12 3	50 80	
50	Գերանով հավաքելը								
51	Հնձող մեքենայով հարթ տեղերում հավաքելը 2 ձիով, յեթե չլրելու ա- ռանքը կան	2 1/2 3	0,4 0,3	ծանր ծանր	1 1	25 25	— —	50 40	
52	Նույնը դեմի հողերում								
53	Ջրով հողերում խուրձ կապող մեքեն. (6 Փուտ.) հավաքելը 2 զույգ ձիերով	2 1/2	բշող 0,4 0,8 (2 բան.)	բեթև ծանր	— 1	75 25	— 1	30 —	
54	Նույնը դեմի հողերում 2 զույգ ձիերով	3	բշող 0,3; 0, 6(2 բան.)	բեթև ծանր	— 1	75 25	— —	20 70	

1	2	3	4	5	6	7	8	9	10
55	Ինքնահան հնձող մե- քենայով կամ ձեռքով հնձած հողը կապելը	1/5	5	բեթև	—	75	3	80	
56	Հունձը կապող մեքե- նայի մոտ տանելը (1-2 կիլոմետր հեռու)	1 1/2 1/8	2 8 բան. 8 բշող 2 բան. 10 կալիքի մոտ հավաքող 14 բան. բարդ. հասցնող 2 տրակտոր 1 հավաքող բանվոր 2 ռեևաններով հավաքելը	միջակ բեթև միջակ բեթև բեթև ծանր	1 — 1 — 1	— 75 75 75 25	2 6 8 — 1	— — 30 50 30	Միջին բերքի ժա- մանակ, հեկտարին 7,2
57	Տեղական ձեռով կալելը								
58	Չորս ձիանի կապող մե- քեն. կալելը (աշնանաց.) դարձ. հավաք., յեթե ող. հեկ. 10,0 ցենտ. բերք տա	10		բեթև	—	75	1	10	
59	Տրակտորային (կիսա- բարդ) կալիքով կալելը (յեթե ողին. հեկտ. 10,0 ցենտ. բերք է ստացվել)			ծանր վորակ միջակ	1 1 1	25 50 —	— — —	20 20 20	
60	Հացահատիկ կրելը	35 ցենտ. 2 բան. հմը 20 ցենտ.		միջակ	1	—	—	—	
61	Դարմանի փոխադրու. Բ.	2 բան. հմը		միջակ	1	—	—	—	
62	III ՅԵԳԻՊՏԱՅՈՐՆԵՆ								
63	Հերկելը								
64	Ցաքանելը								
64	Չրելը	1/2	2	ծանր	1	25	2	50	Մշակման նորմա- ները և գնահատու- թյունը ինչպես բամբակի և աշնա- նայով հացահա- տիկների բաժնու.

1	2	3	4	5	6	7	8	9	10
65	Կրճակալար և ցարանկը		բշտղ 1/3	1 թեթև		75	—	20	
66	Յերկշար յեկիկապոց- րենի սերմանիչ, ցանելը	3	դեկ. 1/3	միջակ	—	—	—	—	
67	Երկրորդ նորոգմանը .	1/5	5	միջակ	1	—	12	—	
68	Ձեռքով բարձրանելը .	1/12	12	միջակ	1	—	—	—	
69	Ձիու կուլովիստորով մշակելը	1	բշտղ 1	միջակ	1	—	1	—	
70	Բողբոջների կտրատումը	1/8	8	թեթև	—	75	6	—	
71	Մանգաղով հավաքելը .	1/4	4	ծանր	1	25	5	—	
72	Կարկանդակ նախադա- րաստական աշխատանք .	1/2	2	միջակ	1	—	2	—	
73	Ձեռքի կախիչ, կախելը	0,5	4	միջակ	1	—	4	—	
IV ՉԱԼԹՈՒԿ									
74	Ջրելը հողը մշակելուց առաջ և հետո .	1	1	ծանր	1	25	1	30	
75	Առաջին հերթը .	1/3	3	ծանր	1	25	3	80	
76	Մարդերի բաժանելը	1/6	6	ծանր	1	25	7	50	
77	Առաջին անգամ ցարան .	1/2	2	միջակ	1	—	2	—	
78	Յերկրորդ հերթը .	1/3	3	ծանր	1	25	3	80	
79	Յերկրորդ անգ, ցարան .	1/2	2	միջակ	1	—	2	—	
80	Յերկրորդ հերթը .	1/3	3	ծանր	1	25	3	80	
81	Յերկրորդ անգ, ցարանելը	1/2	2	միջակ	1	—	2	—	
82	Շվիկի համար հողը պատրաստելը և չալթու- կի սերմեր ցանելը .	0,2	5	միջակ	1	—	5	—	Առաջարկ և լին- քորանի ուղղորդի համար
83	Նույնը .	1/3	3	միջակ	1	—	3	—	Մասնավոր, ուղղոր- համար
84	Շվիկիներ բերել և տնկելը մարգերում	1/18	18	միջակ	1	—	18	—	համար թունջարների
85	Առաջ, բարձրան, (ձեռք)	1/15	15	միջակ	1	—	15	—	
86	Յերկրորդ բարձրան	1/7	7	միջակ	1	—	7	—	
87	Ցանքները հավաքելը	1/5	5	միջակ	1	—	5	—	

1	2	3	4	5	6	7	8	9	10
88	Բուսած ժամանակ ջրելը	1	1	ծանր	1	25	1	30	
89	Մանգաղով հավաքել կա- պել և փոքր գեղեր կազմել	1/10	10	ծանր	1	25	12	50	
90	Սալով կալը տանելը .	1/2	2	միջակ	1	—	2	—	
91	Կարկանդ (4-5 ձիով)	1/2	2	միջակ	1	—	2	—	
92	Ձեռքով բաժնու տալը .	1/3	3	միջակ	1	—	—	80	
V ՔՈՒՆՋՈՒԹ									
93	Ցանքներուց առաջ և հե- տո ջրելը	1/2	2	ծանր	1	25	2	50	
94	Յերկու գույգ ձիով հեր- կելը միջակ հողերի հմը .	1/2	2	ծանր	1	25	2	50	
95	Ձեռքով ցանելը .	2	0,5	թեթև	—	75	—	50	
96	Ձիով ցարանելը .	1	1	թեթև	—	—	—	80	
97	Փարձան և միաժամա- նակ նորոգում .	1/12	12	թեթև	—	75	9	—	
98	Հավաք-դուրս բաշել արմո-	1/5	5	թեթև	—	75	3	80	
99	Կարկանդակապատ, աշի-	1/25	2	միջակ	1	—	2	—	
100	Ձեռքով կախելը և քա- մու տալը	1/4	4	միջակ	1	—	4	—	
VI ԱՐԵՎԱՏԱՆԴԻԿ									
101	Հեղիք .								Մշակման և գնա- հատման նորմաները
102	Կրկնավարը .								նույնն են, ինչ վրդ
103	2 անգամ ցարանելը .								բաժնակարուժ, մեջ
104	Շարքացմանով ցանելը մի գույգ ձիով	3	բշտղ 1/3 դեկ. 1/3	թեթև միջակ	—	75	—	30	և աշխատավար հա- ցանառվելների բաժ- նում
105	Հողն առաջին անգամ փակակաց ձիու կուլովատ.	1	բշտղ 1 դեկ. 1/5	թեթև միջակ	—	75	—	80	Նորման և գնանա- տույնը աշխատ, ինչ- պես առաջին անգամ փակակացներու ժա- մանակ
106	Առաջ, բարձրան, նորոգ.								
107	Հողի 2-րդ փակի կուլու-	1/15		միջակ	1	—	15	—	
108	Յերկրորդ բարձրան								
109	Բերքը հավաք. (հեկտ, միջ.)	1/6	6	միջակ	1	—	6	—	
109	հաշվ. 70 փ. բերք տված ժամ.	1/8	8	թեթև	—	75	6	—	

1	2	3	4	5	6	7	8	9	10
110	Սալով կալ տանելը	1	1	միջակ	1	—	1	—	—
111	Կարելի և քանու տալը (ձեռքով)	1/7	7	միջակ	1	—	7	—	—
VII. Ս Ո Յ Ա									
112	Հերկը	2	բշող $1\frac{1}{2}$ դեկ. 1 (2 մ.)	միջակ	—	75	—	40	Մշակման և գնա- հատման նորմաները նույնն են, ինչ վեր բաժնակարում. և աշխատավար հացա- հատիկների բաժնի- ներում
113	Կրկնավարը	1/18	18	միջակ	1	—	18	—	—
114	2 անգամ ցաքանելը	1/8	8	միջակ	1	—	8	—	—
115	Շարքացանով ցանելը	1/2	2	ծանր	1	25	2	50	—
116	մի քույր ձեռով	1/10	10	միջակ	1	25	12	50	—
117	Հորն 1 և 2 անգ. փակից	1/2	2	միջակ	1	—	2	—	—
118	Առաջին քարի նորսոցն.	1/3	3	բեթև	—	75	2	30	—
119	2-րդ քարիան	1/15	15	միջակ	1	—	15	—	—
120	Ջրեղը մանգաղ. հավաք.	1/15	15	միջակ	1	—	15	—	—
121	Սալով տանելը	1/15	15	միջակ	1	—	15	—	—
122	Չորացնելը	1/15	15	միջակ	1	—	15	—	—
123	Կարելի, քանու տալը (ձեռքով)	1/15	15	միջակ	1	—	15	—	—
VIII. Կ Ե Ն Ա Ֆ									
124	Հերկը (ձեռքով) ծանր	1/3	3	ծանր	1	25	3	80	—
125	Կրկնել համար	1	1	բեթև	—	75	—	80	—
126	Ցաքանելը (ձեռքով)	1/2	0.7	ծանր	1	25	—	90	—
127	Կրկնավար	1	1	բեթև	—	75	—	80	—
128	10 շարքանի շարքացա- նով ցանելը 3 ձեռով	2.5	բշող 0.4 դեկ. 0.8 (2 քան.)	բեթև	—	75	—	30	—
129	Առաջ. քարիան նորաց.	1/20	20	միջակ	1	—	20	—	—
130	2-րդ քարիան	1/15	15	միջակ	1	—	15	—	—
131	Մանգաղով հավաքելը	1/15	15	միջակ	1	—	15	—	—
132	և խուլձ կալելը	1/15	15	ծանր	1	25	18	80	—
132	Ցորուն. սալով տանելը	1/4	4	միջակ	1	—	4	—	—

1	2	3	4	5	6	7	8	9	10
IX. Ծ Մ Ա Ն Ո Տ									
133	3 քույր թեղների հեր- կելը միջակ հորերի համար	1/3	բշող 3 հերկ. 3	բեթև ծանր	—	75	2	30	—
134	8 դիակավոր ցաքանով հորը փերելը 3-4 ձեռով.	3/4	1,3	միջակ	1	—	1	30	—
135	2 անգամ ցաքանելը	1	1	բեթև	1	75	—	80	—
136	Ածուխը և ածկամեջեր կազմելը	1/20	20	միջակ	1	—	20	—	—
137	Շիթիկն. կրա խնուր տան.	1/30	30	միջակ	1	—	30	—	—
138	Շիթիկների տնկելը	1/20	20	միջակ	1	—	20	—	—
139	Ջրով	1/5	5	ծանր	1	25	6	30	—
140	Առաջ. անգ. հորով պնդաց.	1/30	30	միջակ	1	—	30	—	—
141	2-րդ " "	1/20	20	միջակ	1	—	20	—	—
142	Տերևաբաղը և ցողանալը	1/20	20	միջակ	1	—	20	—	—
143	Մխուր. հավաք. ու տանելը	1/40	40	միջակ	1	—	40	—	—
144	Սալով կրելը	1/5	5	միջակ	1	—	5	—	—
145	Շարքելը	1/48	48	միջակ	1	—	48	—	—
146	Արևի տակ չորացնելը	1/45	45	միջակ	1	—	45	—	—
147	Տերևները դատառ կալելը	1/110	110	միջակ	1	—	110	—	—
148	Հակ կալելը	1/15	15	միջակ	1	—	15	—	—
X. Կ Ա Ր Տ Ո Ֆ Ն									
149	Ջրեղով հերկելը	1/2	3	ծանր	1	25	3	80	—
150	Ջրեղով ցաքանելը յեր- կու առջամ	1	1	բեթև	—	75	—	80	—
151	Ցերկորդ հերկը և կար- տիկ շիթիկ անելը	1/2	2 հերկող 10 տնկող	ծանր բեթև	1	25	2	50	—
152	Ջրեղով փերացնելը	1/10	10	միջակ	1	75	7	50	—
153	Ջրեղով բուլը տալը	1/20	20	միջակ	1	—	10	—	—
154	Ջրով	1/2	2	ծանր	1	25	2	50	—
155	Ջրով բուլը տալը	1	1	ծանր	1	25	1	25	—
156	Ջրեղով փորելով հանելը	1/3	30	միջակ	1	25	30	—	—
157	Դարչից տանելը սալով	1/4	4	միջակ	1	—	4	—	—

1	2	3	4	5	6	7	8	9	10
	Ճ. թ. ու մ. ց ա ն ե լ լ								
158	Չիկոյի հերկելը	1/2	2	ծանր	1	25	2	50	
159	Աղաթ և ցուանկուց								
160	հրկնակար	1/2	2	ծանր	1	25	2	50	
161	հրկնանիւ	1	1	ծանր	1	25	1	30	
162	Չեղով ցանկը	1	1	բեթե	1	75	—	50	
163	Խոտնար մերկայով	2	1/2	միջակ	1	—	—	40	
164	խոտ հարկը	3	1/3	ծանր	1	25	3	80	
165	Չեղով խոտ հարկը	1/3	3						
166	Խոտը չուտալը և փոց- խով կուտելը, քերք բեր- քը 25 ցեաններ և	1/4	4	բեթե	—	75	3	—	
167	Մալով կիկը	1/4	4	միջակ	1	—	4	—	
	Դիկելը	1/2	2	միջակ	1	—	2	—	
Բ. ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ									
(խաղող ավելացրու համար)									
168	Համալսյաձ փորումը	1/50	50	ծանր	1	25	62	50	
169	Խաղ. կաղ. ձմր. համ. կտր.	1/12	12	միջակ	1	—	12	—	
170	Ցիցիկը պարտառանիւ	1/20	20	միջակ	1	—	20	—	
171	Ցիցիկը անիելը	1/12	12	բեթե	—	75	9	—	
172	Ցիցիկը անիելը ձգելը	1/8	8	միջակ	1	—	8	—	
173	Վաղ. կաղելը (ձմրանը)	1/8	8	միջակ	1	—	8	—	
174	Քեֆիկը (կանաչ կաղ)	1/15	15	միջակ	1	—	15	—	
175	Մանրը և ավել տերեւ. կտր.	1/6	6	միջակ	1	—	6	—	
176	Ջրելը	1/4	4	ծանր	1	25	5	—	
177	Բժշկելը (Բոլորտի)	1/5	5	միջակ	1	—	5	—	
178	Մժուսը փշելը	1/4	4	միջակ	1	—	4	—	
179	Խաղողի հավաք. հեկտ. 80 անտ. տնած սեւառնու	1/30	30	բեթե	—	75	29	50	

1	2	3	4	5	6	7	8	9	10
180	Խաղողի բերքը սալով կրելը 1 փուտ հեռ. (1 հեկ. 80 ցեւ. բերք խլած դեպք.)	1/9	9 3 րան.	միջակ միջակ	1	—	9	—	
181	Գ. ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒԹՅՈՒՆ								
182	Աղու մասերի բաժանումը	1/5	5	ծանր	1	—	5	—	
183	Փոսեր փորելը պարտառն ծառերի անկիւնների համար	1/30	30	միջակ	1	25	37	50	
184	Ցիցիկը անիելը փոսերը խցնելով և ցիցիկը անիկով բնի չուրջը փոսեր փո- րելը (պարտառն պար- տառների համար)	1/10	10	ծանր	1	—	10	—	
185	Չալացած և պարտառն. բնիկած հյուսիսը կտրելը	1/15	15	ծանր	1	25	18	80	
186	Մառի գաղաթը կտրելը և նորոգելը	1/6	6	ծանր	1	25	7	50	
187	Ջրելը	1/12	12	ծանր	1	25	15	—	
188	Կալին բաղադր. քսելը	1/5	5	միջակ	1	25	6	25	
189	Բժշկելը (հեղուկ սրսկ.)	1/6	6	միջակ	1	—	6	—	
190	Խնձորի բերքը հավաքելը 1 մարդ որեւ. 2 ցեւտ. հավ.	1/8	8	միջակ բեթե	1	—	8	—	
Գ. ԲԱՆԱԼԱՆՈՑԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ									
191	7 կիլոմետր հեռավորու- թյունից բանջարանոցը գոմարը կրելը և ցրելը (1 հեկտար. 1200 փ. հաշվով)	1/10	10	ծանր	1	25	12	50	
192	Փորելը և ամուսնելը կազմել սալով	1/25	25	ծանր	1	25	31	30	
193	Փորելներով գոմարը (եցն.)	1/8	8	միջակ	1	—	8	—	
194	Չեղով հանքային պա- րարտանութ ցանելը	2	1/2	միջակ	1	—	—	50	

1 ցեւտներ հավա-
քածի գնահատումը

1	2	3	4	5	6	7	8	9	10
195	Կաղամբի, պոմիդորի և այլ շեֆիկները տնկելը .	1/12 1/16	12 16	միջակ միջակ	1 1	— —	12 16	— —	
196	Զանաձ տիխի ձիւլ տնկելը	1/10	10	միջակ	1	—	10	—	
197	Զեռքով (կանաչխնեղի) սերմը ցանկել և ծածկելը	1/5	5	միջակ	1	—	1	—	
198	Զեռքով (գաղար, ճակն-դեղ և այլն) ցանկել	1/5	5	ծանր	1	25	6	30	
199	Զբելը (մի անգամ) գե-րակց ջուր տնկելը .	1/8	8	միջակ	1	—	8	—	
200	Ֆայդան, խոտերը ածու-նեղից հեռացնելը (1 անգ.)	1/6	6	միջակ	1	—	6	—	
201	Ածուխների յերեւը, ձեռ-քով փակկացնելով	1/5	5	միջակ	1	—	5	—	
202	Կուլտիվատորի աշխատ-ծեղի (Պլանետուլյա) .	1/12	12	միջակ	1	—	12	—	
203	Կարտոֆիլ, կաղամբի և ուղիւ բույսերի բուկը տալը ձեռքով	1	1	միջակ	1	—	1	—	
204	Կարտոֆիլ, կաղամբի բուկը տալը ձիւլ միջո-ցով	1/25	25	միջակ	1	—	25	—	
205	Կուլտ. և կիսակրկար արմատապտուղները հո-ղից հանելը, հավաքելը, տնկնելը կորասնել և տեսակների բաժանելը .	1/50 1/20	50 20	միջակ միջակ	1 1	— —	50 20	— —	
206	Կաղամբը հավաք, մաքր, տեսակ, բաժան, և կտոր, Գուլես տիլը հավաքելը	1/30	30	միջակ	1	—	30	—	
207	Կարտոֆիլը, ձեռքի								
208	Խաճիկ հանելը և ձեռքով ջուկելը								

№	2	3	4	5	6	7	8
1	Աշխատանքների տեսակները	Մի մարդու մշակմանը 10 օրանոց	Մի բանիւրին գլուխն-ի վրէիլը 10 տրոփ -ըստ (բաժնի) հաշիւով	Աշխատանքի բաշխումը որ դոմիկուլյուսը	Մշակման որակն նոր-մայի գնահատումը աշ-խատանքային ուղով	Աշխատանքային ուղով	Մշակման որակն նոր-մայի գնահատումը աշ-խատանքային ուղով
209	Զբելի խնամքը	10	15	միջակ	1	—	—
210	Լճկան յեղների ու գո-մեղների խնամքը գոմը մաքրելով	12-15	20	միջակ	1	—	—
211	Կովերի խնամքն առանց կթելու	15-20	20-25	միջակ	1	—	—
212	Նույնը քաղաքամերձ տնտեսութուններում	10-12	—	ծանր	1	25	—
213	Կովերը կթելը ամառնե-րը և ձմեռային և հորթե-րին կերակրել տալով	8	10	միջակ	1	—	—
214	Կովերը կթելը առանց հորթերին ուտեցնելու	12 (տեղ.)	—	միջակ	1	—	—
215	Նույնը	10 (կուլտ.)	—	միջակ	1	—	—

Մանթիկուլյուս

216	Նոյապետականության պարտադիր, ժամանակ գո- մերը մաքրել և կեր առա- նելը	10	30	միջակ	1	—
217	Հորիզոնական խնամելը նը- րանց կերակրելով	15	15	միջակ	1	—
218	Մատուցած անասունների խնամքը արտաներում արածելու ժամանակ	20	30	բեթև	—	75
219	Վաշխաղներ արածաց- նելն ու կթելը	200-250	250-300	միջակ	1	—
220	Վաշխաղներ կթելը ա- մանելը լվանալով ա- ռանց արածացնելու	40 (մի ժամում կթելը)	40 (մի ժա- մում կթելը)	միջակ	1	—
221	Վաշխաղների խնամքը ուժեղ կերով և ժա- մանակ	120-150	—	միջակ	1	—
222	Մատուցած վաշխաղների ու կտրվելի խնամքը	150 (հաս- տատանում)	150 (կտաքոչ և քոչվ. տնու.)	բեթև	—	75
223	Վաշխաղների խնամքը	20-25	20-25	վորակ	1	50
224	Մեծ խոզերի խնամքը ժամանակակից կերակրելով	15	—	միջակ	1	—
225	Մեծ խոզերի խնամքը կեր արտաներում ար- ածելն (հաստատուն փաղախ ունին)	25	100 (քոչվ. և կտաքոչվոր.)	միջակ	1	—
226	Մինչև 3 ամսական խոզ- կորներ խնամքը	50	70	բեթև	—	75
227	Նորոգ լեղջուրավոր ա- նասուններ արածացնելը	60	100	ծանր	1	25
228	Թռչունների խնամքը	50	—	միջակ	1	—

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ -- ԱՇԽԱՏ-ՈՐՈՎ

1. Պատվեր (նարյալ) աշխատանքի համար

Այս կամ այն աշխատանքը կատարելու հա-
մար՝ բերդադիրը վարչութիւնի նախագահից կամ
ճյուղի վարիչից գրավոր պատվեր եւ ստանում
վորոշ ժամանակամիջոցում աշխատանքի համար:
Պատվերը պետք եւ բերդադիրին տրվի վոչ ուշ՝
քան աշխատանքը սկսելուց մի որ առաջ, այն-
պես, վոր բերդադիրը կարողանա աշխատանքը
բաժանել բերդադի անգամների միջև ու նրանց
հայտնի աշխատանքի տեղի ու ժամանակի հա-
մար:

Բերդադիրը բերդադի անգամներին կամ աշ-
խատողներին մի ամբողջ խմբին բանվորական
կարգադրութիւնը բերանացի եւ անուս:

Բերդադիրին արվող պատվերը հետևյալ ձևով
եւ կազմվում.

Պատվեր №

1930 թ.

բերդադիր

(գրվում եւ աշխատանքի ճյուղն ու ազգանունը)

Գործի անունը

2. Աւխասանի հաւվեառումը

Կոլխոզնիկները աշխատանքի հաշվեառումը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.

ա) Կոնտրոլային նյութեր տալ՝ պատվերների կատարումը, մշակման համար սահմանված նորմաների պետքականութունը և բանվորական ուժի եզրագործման չափն ստուգելու համար:

բ) Նյութեր տալ՝ տնտեսութան առանձին ճյուղերի վրա գործադրված աշխատանքը հայտնաբերելու, վորպեսզի դրանով վորոշվի ապրանքային արտադրանքի ինքնարժեքը (դաշտագործութան մեջ, կուլտուրաների, անասնաբուծութան մեջ—կաթնատնտեսական արտադրանքի և այլն):

գ) Նյութեր տալ՝ յեկամուտը կոլխոզնիկների միջև բաժանելու ըստ աշխատանքի քանակի, վորակի և հաշվ տեսնելու վարձու բանվորական ուժի հետ:

Այդ նպատակով՝ ժամանակով կատարվող աշխատանքների համար տաքել է մտցնվում և կըտորով աշխատանքների համար՝ տաքել-պատվեր:

Աշխատանքի հաշվեառման տաքելը պահում է բրիգադիրը, ճյուղի վարիչը, կամ հաշվետարը: Ժամանակով վճարվող աշխատանքի հաշվեառման համար՝ ամսեկան տաքել է պահվում աշխատանքը կատարվող տեղում:

Աշխատանքի ժամանակային սիստեմի աշխատանքի հաշվեառման համար՝ հետևյալ ձևի տաքել է սահմանվում:

	Առաջա- գրու- թյուն	Նշում—գոր- ծը կատարե- լու մասին
1. Գործի տեղը դաշտի, բանջարանոցի և այլն №-ը)		
2. Գործի քանակը		
3. Իրագործելու ժամկետը		
4. Գյուղատնտեսական անհրաժեշտ գործիքների քանակը		
ա)		
բ)		
գ)		
5. Անհրաժեշտ լծկան ուժերի քանակը		
ա) . տրակտոր		
բ) ձի		
գ) յեզ ու գոմեշ		
6. Անհրաժեշտ բանվորական ուժի քանակը		
ա) հասուն տղամարդիկ		
բ) հասուն կանայք		
գ) դեռահասներ		
7. Անհրաժեշտ մանր ինվենտարի քանակը		
ա)		
բ)		
գ)		

Ստորագրություն վարչության նախագահի կամ ճյուղի վարիչի

Պատվերը պատճեն վերցնող թղթի վրա է գրվում, 2 օրինակ, վորից մեկը տրվում է բրիգադիրին, մյուսը, վորպես արմատ՝ մնում է գըրքույկում:

Պատվերը կատարելուց հետո՝ բրիգադիրը կատարումը նշանակելով՝ պատվերը վերադարձնում է ճյուղի վարիչին:

կատարում ե մի քանի որ, ապա կարելի ե մի տաբել-պատուեր կազմել ե մի քանի որվա գործի համար: Իսկ յեթե մի որվա մեջ բրիգադը տնտեսության զանազան ճյուղերի վերաբերյալ գործ ե կատարում, ապա յուրաքանչյուր ճյուղի համար առանձին տաբել-պատուեր ե կազմվում:

Տաբել-պատուերի լրացումը բաժանվում ե յերեք մոմենտի.

1) Ճյուղի վարիչից ամբողջ գործի համար ընդհանուր պատուեր ե ստացվում. այդ պատուերի հիման վրա՝ բրիգադիւրը աշխատանքի նախորյակին տաբել-պատուերում գրում ե տրված գործը կատարելու նշանակված աշխատողի անունն ազգանունը: Հետո յուրաքանչյուր աշխատողի ազգանվան դիմաց գրվում ե նրան հանձնված գործի անունը: Յեթե գործը խմբական ե, ապա գործերի անունը գրվում ե ամբողջ խմբում գրտնվողների ազգանունների դիմաց: Չորրորդ սյունյակում մատնանշվում ե, թե աշխատողն ինչ տեսակ քաշող ուժով պետք ե գործը կատարել (յեթե անասուններ են, ապա գրվում ե նրանց տեսակն ու քանի գլուխ լինելը. յեթե տրակտոր ե, գրվում ե նրա մարկան):

Յեթե վորևե աշխատող այն ժամանակամիջոցում, վորի համար տաբել նարյադ ե կազմվում, պետք ե մի քանի աշխատանք կատարել, ապա նրա ազգանվան դիմաց լրացվում ե մի քանի տող, հատկացնելով աշխատանքի յուրաքանչյուր տեսակին՝ մի տող:

Բրիգադիւրի սահմանած ու տաբել պատուերի 2-րդ, 3-րդ ե 4-րդ սյունյակում գրած աշխատանքների դասավորումը-կարգը բրիգադի գոր-

ծիչներին հայտնվում վոչ ուշ գործի դուրս գալու նախորյակից:

Տաբել-պատուերի այդ սյունյակները լրացնելու գործում՝ բրիգադիւրին պետք ե հաշվետարն ոգնել:

2) Աշխատանքը վերջացնելուց հետո՝ հենց աշխատանքի տեղում բրիգադիւրը 5-րդ սյունյակում գրում ե յուրաքանչյուր աշխատողի կատարած գործի քանակությունը, իսկ յեթե աշխատանքը խմբական ե ու յուրաքանչյուր մասնակցող հավասար բաժին ե ստանում, ապա գրվում ե ամբողջ խմբի կատարած գործի քանակությունը: 6-րդ սյունյակում բրիգադիւրը նշանակում ե, թե, յուրաքանչյուր աշխատող փաստորեն քանի որ ե աշխատել: Վերջապես՝ 8-րդ սյունյակում բրիգադիւրը գրում ե աշխատողի արած պրոդուկտներն ու գործից ուշանալը:

Աշխատանքի վորակի հատկանշումներում (7-րդ սյունյակ) միայն չպետք ե պարզապես գրել թե՛ վատ ե, լավ ե ե այլն. այլ պետք ե հաշվետարին ճիշտ ցուցմունքներ տրվեն, թե յուրաքանչյուր աշխատողի համար ինչքան պետք ե ավելացնվի կամ իջեցնվի:

Այդ պատճառով 7-րդ սյունյակում աշխատանքի վորակը ցույց տալու համար՝ կոլխոզը կարող ե սահմանված կարճ պայմանական բան գրել: Այսպես, որինակ կարելի ե գնահատումներ անել այսպիսի պայմանական նշաններ դնելով. «4» — լավ վորակ, պրեմիայի արժանի:

«3» — բավարար վորակ. պրեմիա չի ստանում:

«2» — վատ վորակ, տուգանելի — ե

«1» — անպետք վորակ, ամենեին չվճարելի:

Տաբել-պատվերում աշխատանքի վորակի ուղիղ գնահատական տալուն և պրոգնոզներն ու ուշացումները նշանակելուն պետք է հետևի ճյուղի վարիչը:

Փորձարքային սխտեմով աշխատանքի լավ վորակի համար ավել հաշվելու և վատ վորակի համար իջեցնելու չափի վորոշումն առաջարկում է սահմանել ընդհանուր ժողովի միջոցով, որինակ կոլխոզնիկի որվա աշխատանքի ընդհանուր գնահատումի վրա 10% ավելացնել կամ 25% իջեցնել:

Ժամանակային սխտեմի գեպքում՝ լավ աշխատանքի, ինչպես և ամեն տեսակ գյուտերի ու աշխատանքի միջոցների բարելավման համար կոլխոզնիկին պրեմիա է տրվում տարվա վերջին, պրեմիայի ֆոնդը պարգևելուց հետո:

Կոլխոզնիկին պրեմիա հատկացնվում է՝ թեկնածուլթյունը կոլխոզի արտադրական խորհրդակցությունում քննության առնելուց հետո, վորտեղ վորոշվում է նույնպես պրեմիաների չափը՝ պրեմիայի ֆոնդում յեղած գումարի համապատասխան:

Ժամանակով աշխատանքներում աշխատանք կատարող, ինչպես և աշխատանքի միջոցների բարելավում մտցրած կամ գյուտեր արած կոլխոզնիկներին պրեմիա տալու թեկնածությունը կարող են դնել թե ճյուղերի վարիչներն ու բրիգադիրները և թե առանձին կոլխոզնիկները:

Տաբել-պատվերը մինչև 8-րդ սյունյակն էլ հետը լրացնելուց հետո՝ բրիգադիրն ստորագրում ու հանձնում ճյուղի վարիչին:

Ճյուղի վարիչը բրիգադիրից ստանալով կատարած աշխատանքը, գրածները հաստատում է

ու տաբել-պատվերն ստորագրելով՝ տալիս հաշվետարին:

3) Հաշվետարը տաբել-պատվերի առաջին ութ սյունյակներում գրածների հիման վրա՝ յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած գործը հաշվում է աշխատ-որով, և լրացնելով տաբել-պատվերի վերջին չորս սյունյակները՝ իր ստորագրությամբ վավերացնում է հաշվի ճիշտ լինելը:

Ժամանակով աշխատանքի հաշվետուան տաբելն ու կտորով-«գդեյնի» աշխատանքի տաբել-պատվերն իրանց բովանդակությամբ բավարարում են աշխատանքի հաշվետուան բոլոր պահանջներին ու կարող են իբրև նյութ ծառայել թե պատվերները կատարելը, մշակման նորմայի պետքականությունը, բանվորական ուժի ինչ չափով ոգտագործումն ստուգելու, տնտեսության առանձին ճյուղերի վերաբերմամբ գործադրած աշխատանքը վորոշելու համար, և թե տնտեսական տարվա վերջին յեկամուտը բաժանելու աշխատանքի քանակի ու վորակի համաձայն:

Պատվերի կատարումն ստուգվում է կատարածի քանակության մասին տաբել-պատվերի հիման վրա պատվերում գրածներով:

Կոլխոզում սահմանված մշակման նորմաների ստուգման ամենամատչելի պրիմիտիվ ձևը հետևյալն է. տաբել-պատվերից վերցնվում է վորոշ ժամանակամիջոցում կատարած յուրաքանչյուր տեսակի աշխատանքի քանակությունը, յերկու մեծությունների միջոցով իմացվում է մի բանվորական որվա միջին մշակման չափը:

Ապա այդ փաստական միջին մշակումը գուգադրվում է կոլխոզում ընդունված նորմային,

վորոշվում նրա պետքականութիւն չափը ու համապատասխան ուղղումներ մտցնելով—կամ ավելացնելով՝ կամ պակասեցնելով:

Հետո՝ տարբերներով կարելի է իմանալ բրիգադի և կոլխոզի յուրաքանչյուր անդամի բեռնավածութիւն չափն առանձին-առանձին վերցրած, իսկ իմանալով, թե յուրաքանչյուր կոլխոզնիկ ինչքան ժամանակ է աշխատել, կարելի է նրանց միջև աշխատանքի հավասար բաժանումը կարգավորել:

Յուրաքանչյուր կոլխոզնիկի գործադրած աշխատանքի չափն ու աշխատ-որերի քանակութիւնը բավական է ամիսը մի անգամ գրքերը մտցնել. դրա համար, տարբել-պատվերների հիման վրա պետք է յերկու ձևի ամսեկան հանրագումար տեղեկագիր կազմել, այն է.—1) գործարքային աշխատանքների հանրագումար տարբել՝ հաշվեառելու և կոլխոզնիկների անձնական հաշիվը մտցնելու ամսվա մեջ նրանցից յուրաքանչյուրի ունեցած աշխատ-որերի քանակութիւնը. և 2) աշխատանքների հանրագումար տեղեկագիր՝ յուրաքանչյուր ճյուղում գործադրած աշխատանքը հաշվեառելու և համապատասխան ճյուղային արտադրական հաշիւների մեջ մտցնելու:

Անձնական հաշիւներում ու հաշվեգրքույկներում այդ բաները գրվում են աջ կողմում, իսկ ճյուղային արտադրական հաշիւների ձախ կողմում:

Հանրագումար տարելը կազմվում է ժամանակով աշխատանքի տարելի ձևով, միայն նրա վերնագրում, աշխատանքի տեղը մատնանշելու փոխարեն՝ գրվում է բրիգադի անունն ու №-ը:

Գործարքային աշխատանքները հանրագումար տարել են մտցնվում ամեն օր, ստացված տարբել-պատվերների համաձայն:

Հանրագումար տարել կազմվում է 2 որինակ, վորոնցից մեկը միշտ կախում են մի աչքի ընկնող տեղ, ի գիտութիւն և հսկողութիւն կոլխոզնիկների և նրանց կատարած աշխատ-որերը գրելու համար:

Ամիսը վերջանալուց հետո տրվում է յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատ-որերի ընդհանուր գումարն ու մտցնվում տարելի վերջին սյունյակը:

Յերբ կոլխոզնիկների աշխատ-որերի քանակութիւնը հաշվվում է, այդ հաշիւն ամեն ամիս տարելից մտցնվում է կոլխոզնիկի անձնական հաշիւն ու հաշվեգրքույկը:

Յուրաքանչյուր կոլխոզնիկի կատարած աշխատ-որերի գումարը պետք է անձնական հաշիւ աջ կողմում գրել:

Աշխատանքների հանրագումար տեղեկագիրը կազմվում է նույն ժամանակաշրջաններում, ինչ վոր գործարքային աշխատանքների հանրագումար տարելը:

Աշխատանքների հանրագումար տեղեկագրի (վեդոմոստ) ձևն այսպես է.

Աշխատանքների տեղեկագիր 1930 թվի.....

..... ամսվա

ճյուղ..... կուլտուրա

Նշանակում և անուն	Աշխատանքի որերի քանակությունը						
	Ժամանակով աշխատանքի տարեկների և գործարքային (դրեկների) աշխատանքի տարեկ-պատ- վերների №№-ը	Անդամների ու նրանց ընտանիքների քանակ.		Ընդամենը աշխատող	Ընդամենը անա-		Ընդամենը
		Հասակավոր			տուն		
		Տղամարդիկ	Կանայք		Ձի	Յեղ ու գո- մեշ	
		Դեղատեղիներ 14—16 տարեկան					

Աշխատանքի տեղեկագիրը (վեդոմոստ) կազմվում է կամ ըստ ճյուղերի (բոլոր մշակույթների կամ անասունների տեսակներին՝ միասին), կամ ըստ յուրաքանչյուր մշակույթի առանձին առանձին, նայած թե հաշվի գրքերում արտադրական հաշիվներն ինչպես են բացված, — ամբողջ ճյուղինը միասին, թե՛ առանձին-առանձին մշակույթներին բաժանած:

Գործադրած աշխատանքն ու քաշող—լծկան ուժի աշխատանքը սխտեմատիկ կերպով մըտցնվում աշխատանքի տեղեկագիր, ինչ չափով վոր հաշվետարը աշխատանքների տարել է ստանում: Տարվա ընթացքում կատարած գործն աշխատանքի տեղեկագրի մեջ է մտցնվում աշխատողներով, իսկ լծկան ուժերի գործադրած աշխատանքը՝ պարզապես որերով:

Իսկ տնտեսական տարին վերջանալուց և քաշող-լծկան ուժի ու հասարակ աշխատանքի (աշխատ-որ) միավորի արժեքը պարզելուց հետո՝ ճյուղային արտադրական հաշիվներում՝ ամբողջ տարին գործադրված աշխատանքի ու լծկան ուժի վերջնական գնահատությունն է տրվում միանգամից:

3. Անդամների հետ հաշիվ տեսները

Նայած թե կոլխոզում ինչքան բնական արտադրանք, կամ իրանց արտադրանքի իրացումից ստացված ինչքան դրամական միջոցներ կան, կոլխոզնիկներին կարելի է ավանս տալ բնականով ու դրամականով:

Ինչպես առաջ ասվեց, յուրաքանչյուր կոլխոզնիկի աշխատ-որերի քանակությունը ժամանակով ու կտորով աշխատանքի տարելից գրվում է անձնական հաշվի ու հաշվեգրքույկի աջ կողմում:

Իսկ կոլխոզնիկին տրված ավանսները գրվում են անձնական հաշվի ու հաշվեգրքույկի ձախ կողմում, ըստ վորում թե ավանս տալու և թե վերջնական հաշիվը տեսնելու ժամանակ՝ բնականով տրվածի արժեքն ու տրված փողի գումարները գրվում են առանձին սյունյակում, այնպես, վոր միշտ կարելի լինի վորոշել, թե կոլխոզնիկին համեող յեկամուտներից ինչ տոկոսն է բնականով վճարված և ինչ տոկոսը՝ փողով:

Աշխատանքի վերջնական հաշիվը տեսնվում է տնտեսական տարվա վերջին, յերբ հայտնի է դառնում ըստ աշխատանքի քանակության և վորակի՝ բաժանելիք յեկամուտի ու բերքի գումար-

ընդ Տարվա վերջին յեկամուտի բաշխումն ըստ աշխատանքի՝ կատարվում է հետևյալ կարգով:

Ամենից առաջ պետք է հաշվել, թե բոլոր կոլխոզնիկները տարվա ընթացքում ինչքան աշխատ-որ են ունեցել, վորից հետո հաշվվում է, թե մի աշխատ-որին ինչքան յեկամուտ է ընկնում:

Որինակ, յեթե պետք է աշխատանքի քանակության ու վորակի համեմատ 32,000 ուրբլի բաժանել, իսկ տարվա մեջ կոլխոզնիկները գործել են 20,000 աշխատ-որ, ապա յուրաքանչյուր աշխատ-որին կընկնի 1 ուրբ. 60 կ. յեկամուտ ($32,000 : 20,000 = 1 \text{ ու. } 60 \text{ կ.}$):

Դրանից հետո՝ տարվա ընթացքում յուրաքանչյուր կոլխոզնիկի գործած աշխատ-որերի քանակության մասին յեղած տվյալների, անձնական հաշիվների ու հաշվեգրքույկների հիման վրա՝ հաշվվում յուրաքանչյուր կոլխոզնիկին հասանելիք յեկամուտի գումարը:

Որինակ, յեթե մի վորեն կոլխոզնիկ տարվա ընթացքում աշխատել է 225 աշխատ օր, իսկ տրված կոլխոզում, ինչպես արդեն սահմանված է, մի աշխատ-օրվա արժեքը հավասար է 1 ու. 60 կոպեկի, ապա այդ կոլխոզնիկին աշխատանքի քանակության ու վորակի համեմատ հասնում է 1 ու. 60 կ. $\times 225 = 360$ ուրբլի:

Աշխատանքի քանակության ու վորակի համեմատ յուրաքանչյուր կոլխոզնիկին հասանելիք գումարն այս ձևով հաշվելուց հետո, գումարն անց է կացնվում անձնական հաշվի ու հաշվեգրքույկի աջ կողմը, տարվա մեջ կոլխոզնիկի գործած աշխատ-օրերի թվի կողքին:

Տնտեսական տարվա վերջին, յեկամուտը վերջնականապես ըստ աշխատանքի բաժանելու համար՝ տեղեկագիր է կազմվում հետևյալ ձևի.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

... թվի տնտեսական յեկամուտներն ու բերքն աշխատանքի քանակության ու վորակի համեմատ բաժանելու համար.

Անգամներ ազգանուն- ներն ու անունները	Տարվա մեջ աշխատ-որ երի թիվը	Ինչքան յեկամուտ է հասնում աշխատ-օրվա համեմատ	Տարվա ընթաց- քում ավանս տրված			Վերջնական հաշվով լրացու- ցիչ գումար է ստանում			Ստացողի ստորագրությունը
			Փողով	Բնականով	Ընդամենը	Փողով	Բնականով	Ընդամենը	

ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ—

ՀԱՇՎԵՏԱՐ—

Յեթե կոլխոզնիկներին վերջնական հաշվով ըստ աշխատանքի հասանելիք յեկամուտի գումարը տրվում է միանվագ, ապա այդ գումարը տեղեկագրից լիովին մտցնվում է անձնական հաշվի ու հաշվեգրքույկի ձախ կողմը:

Այդ դեպքում անձնական հաշվի ու հաշվեգրքույկի հաշվեկշիռն է ստացվում (բալանս, աջ և ձախ կողմերի հավասարություն) և կոլխոզնիկ-

ներն աշխատանքի համար կոլխոզից այլ ևս վո-
չինչ ստանալիք չեն ունենում:

Իսկ յեթե կոլխոզնիկները հետ վերջնական
հաշիվը մաս-մաս ե տրվում (կոլխոզը պահանջ-
վող գումարը կամ մթերքները պատրաստի չու-
նենալու պատճառով), ապա վերջնական հաշվի
գումարը մաս-մաս ամեն անգամ ինչքան վոր
տրվում ե, մտցնվում ե անձնական հաշվի ու հաշ-
վեգրքույկի ձախ կողմը այնքան ժամանակ, մին-
չև վոր կվճարվի ամբողջ հասանելիք գումարը,
մինչև վոր հաշվի և գրքույկի աջ և ձախ կողմերն
իրար կհավասարվեն:



Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

2013

«Ազգային գրադարան»

1533



NL0045427

28

62

ПРИМЕРНЫЕ
нормы выработки сель-хоз. работ
оценка и учет труда в трудоднях

АЗЕРНЕШР
Баку—1931

